

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2018-2019 ուստարի)**  
**10-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)**

**ա) Հայոց պատմություն (15 միավոր)**

1. Որտե՞ղ է պեղումների արդյունքում բացվել աշխարհում մինչ օրս հայտնի հնագույն տաճարական համալիրը. 0,5 մ.  
 ա/ Շենգավիթ բ/ Առատաշեն  
 գ/ Ադաբլուր դ/ Պորտաբլուր
2. Ո՞վ է տիգրանյան թագով թագադրված Կոմմագենեի արքան. 0,5 մ.  
 ա/ Մեթրոդորոս բ/ Տիմարքոս  
 գ/ Անտիոքոս Ա դ/ Արտանես
3. Որտե՞ղ է գտնվել Տիրի պաշտամունքի գլխավոր կենտրոնը. 0,5 մ.  
 ա/ Թիլ բ/ Բագաոիճ  
 գ/ Երիզա դ/ Երազամույն
4. Ո՞ր պատմիչն է հիշատակում Տիգրանակերտի պարիսպների բարձրությունը. 0,5 մ.  
 ա/ Պլուտարքոս բ/ Մովսես Խորենացի  
 գ/ Ամֆիկրատես Աթենացի դ/ Ապպիանոս
5. Ինչպե՞ս էր կոչվում Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության էլամերեն բաժնում. 0,5 մ.  
 ա/ Ուրարտու բ/ Արմինա  
 գ/ Հարմինույա դ/ Նաիրի
6. Մե՞ծ Հայքի ո՞ր գավառից սկսվեց Մարկոս Անտոնիոսի պարթևական արշավանքը. 0,5 մ.  
 ա/ Դերջան բ/ Եկեղիք  
 գ/ Տարոն դ/ Կարին
7. Ո՞վ է հաջորդել Տրդատ Բ-ին. 0,5 մ.  
 ա/ Խոսրով Բ բ/ Տրդատ Գ  
 գ/ Որմիզդ-Արտաշիր դ/ Արտավազդ Ե
8. Ե՞րբ են հռոմեացիները գահընկեց արել և Հռոմ տարել Բակուր Արշակունուն. 0,5 մ.  
 ա/ 161 թ. բ/ 164 թ.  
 գ/ 163 թ. դ/ 165 թ.
9. Հայոց ո՞ր արքայի մահվան մասին են Տակիտոսի հետևյալ խոսքերը. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:  
 \_\_\_\_\_ 0,5 մ.
10. Ո՞ր փաստաթղթով էր սահմանվում յուրաքանչյուր նախարարի տեղը Արշակունյաց արքունիքում:  
 \_\_\_\_\_ 0,5 մ.
11. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)  
 ա/ Սոհեմոսի գահակալության ավարտը Մեծ Հայքում  
 բ/ Վաղարշ Ա-ի գահակալման սկիզբը Պարթևստանում  
 գ/ Արքայական առաջին դրամի հատումը Հայաստանում  
 դ/ Կարակալայի ուղարկած զորքի վտարումը Հայաստանից  
 ե/ Ոսխայի ճակատամարտը  
 գ/ Տրդատ Բ-ի հեռանալը Հռոմեական կայսրության սահմաններ  
 է/ Խոսրով Ա-ի ձերբակալությունը Ասորիքում

1	2	3	4	5	6	7

12. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Լեռնահայաստանի (Սյունիքի) սպարապետ
2. ՀԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար
3. ՀՍԽՀ արտգործո՞ղկոմ
4. ՀՍԽՀ Ժողկոմխորհի (կառավարության) նախագահ
5. ՀՀ վարչապետ
6. ՀՀ բանակի գլխավոր հրամանատար (սպարապետ)

ա. Գ. Հարությունյան

բ. Ս. Տեր-Գաբրիելյան

գ. Գ. Նժդեհ

դ. Ա. Մռավյան

ե. Թ. Նազարբեկյան

զ. Ալ. Խատիսյան

1	2	3	4	5	6

13. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Տիգրան Երվանդյանի իշխանությունը տարածվում էր նաև Մարաստանի, Վրաստանի և Աղվանքի վրա:

բ/ Ըստ հույն պատմիչ Քսենոփոնի՝ Երվանդ Սակավակյացը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Բ Մեծի հետ:

գ/ Տիգրան Երվանդյանի օրոք հայոց թագավորությունն ուներ 48-հազարանոց բանակ:

դ/ Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներից Մենոնը Գավգամելայի ճակատամարտից 2-3 տարի անց ներխուժում է Հայաստան՝ Սոթքի ոսկու հանքերը գրավելու համար:

ե/ Ռուսախինիլի քաղաքի արքունի պալատը սպասարկող անձնակազմում 119 գրագիրներ էին, որոնք ենթարկվում էին «հաշվի մարդուն»:

զ/ Վանի թագավորության զինված ուժերը Սարդուրի Բ-ի օրոք շուրջ 350 հազար էին:

է/ Քսենոփոնի նահանջի երթուղին անցել է Կորդվաց լեռներից մինչև Սև ծով:

ը/ Երվանդ Դ-ն Արածանիի և Երասխի խառնարանի մոտ կառուցել է Երվանդաշատը:

թ/ Մովսես Խորենացին Արտաշես Ա-ին բնութագրում է որպես հայոց թագավորներից ամենահզորը և ամենախոհեմը:

1	2	3

14. Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Բագրատունիների ժամանակաշրջանում բուն քաղաքը կոչվում էր շահաստան:

բ/ Բագրատունյաց Հայաստանում հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող արքունի հատուկ պաշտոնյան կոչվում էր մուխթասիբ:

գ/ Արքունի ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում կոչվում էր մարզպան:

դ/ Իշխանաց իշխանը տնօրինում էր ենթակա իշխանների գործունեությունը, պետական գանձարանը և գահաժառանգի խնամակալությունը:

ե/ Միջնաբերդը շրջապատող պարսպից դուրս քաղաքի արվարձաններն էին, որտեղ բնակվում էին ընչազուրկ խավերը:

1	2

15. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 372 թ. Մուշեղ Մամիկոնյանը, լուր ստանալով Շապուհ Բ-ի առաջիկա ներխուժման մասին, զորքով շարժվում է դեպի Գանձակ: Հայոց զորքը «Քաջ Մուշեղի համար» ոգևորիչ բացականչություններով մարտի է ներվում և ջախջախում պարսկական ուժերը:

0,5 մ.

16. Տրված պնդումների համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը:
- ա/ Մենուան առաջին հաղթանակներն է տարել տարածաշրջանի խոշորագույն պետության՝ Ասորեստանի նկատմամբ և Վանի թագավորությունը վերածել գերտերության:
- բ/ Իշպուլինիի օրոք սկսվեցին և Մենուայի օրոք շարունակվեցին ռազմական բարեփոխումները. նախկին դաշնային աշխարհազորը փոխարինվեց արհեստավարժ կանոնավոր բանակով:
- գ/ Արգիշտի Ա-ն Բ. ա. 785-783 թթ. արշավել է Դիաուխի, իր տերությանը միացրել Սևանա լճի ավազանի իշխանությունները, ամրապնդել դիրքերը Ուրմիո լճից հարավ-արևմուտք:
- դ/ Արգիշտի Ա-ի առաջնորդությամբ ստեղծվել է Վանի աշխարհակալությունը:
- ե/ Սարգուրի Բ-ի օրոք Վանի տերությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը:
- զ/ Վանի վերջին հստակ թվագրվող արքան Սարգուրի Գ-ն է, որն ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում է Բ. ա. 643 թ.:

1,5 մ. (յուրաքանչյուր ստույգ պատասխանը՝ 0,25 մ., ոչ ստույգը՝ — 0,25 մ., իսկ բոլոր «Զգիտեմ» պատասխանները՝ 0 մ.)

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Զգիտեմ						

17. **Շարադրանք. ներկայացրե՛ք Մեծ Հայքի թագավորությունը դրածո թագավորների օրոք:**  
3 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,25 մ.)

**բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)**

1. Ո՞ր քաղաքում է Բ. ա. 449 թ. կնքվել հույն-պարսկական հաշտության պայմանագիրը. 0,5 մ.  
ա/ Շոշ  
բ/ Աթենք  
գ/ Կորնթոս  
դ/ Պերսեպոլիս
2. Ինչպե՞ս էր կոչվում ժողովրդական ժողովը Սպարտայում. 0,5 մ.  
ա/ գերուսիա  
բ/ ագորա  
գ/ բուլե  
դ/ ապելլա
3. Ե՞րբ է բացվել Կոստանդնուպոլսի բյուզանդական համալսարանը. 0,5 մ.  
ա/ 976 թ.  
բ/ 1025 թ.  
գ/ 1045 թ.  
դ/ 1081 թ.
4. Ո՞վ է կառուցել Աբու-Սիմբելի ժայռափոր տաճարը. 0,5 մ.  
ա/ Թութանհամոն  
բ/ Թութամոս Բ  
գ/ Էխնաթոն  
դ/ Ռամզես Բ
5. Ինչպե՞ս էին կոչվում առևտրականներին միավորող կազմակերպությունները միջնադարյան Եվրոպայում:  
0,5 մ.
6. Թվարկե՛ք միջնադարում Եվրոպայում և (կամ) Ասիայում եղած 4 պետություններ, որոնք այսօր այլևս գոյություն չունեն:  
1 մ. (4 X 0,25 մ.)
7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:  
1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա/ Ռիչարդ Ա Առյուծասիրտը գլխավորում էր խաչակրաց երկրորդ արշավանքը:  
բ/ Միջերկրական ծովի արևելյան ափին ստեղծված խաչակրաց հոգևոր-ասպետական միաբանությունները ենթարկվում էին բյուզանդական կայսրին:  
գ/ 410 թ. վեստգոթերը՝ Ալարիխի գլխավորությամբ, գրավեցին և թալանեցին Հռոմը:

դ/ Դիոկղետիանոսի օրոք Հռոմեական կայսրությունում պրինցիպատը փոխարինվեց դոմինատով՝ միապետի անսահմանափակ իշխանությամբ:  
ե/ Աքրլաստիկայի հիմնադիրը Դանթե Ալիգիերին է:  
զ/ Թեոդոսիոս Ա-ն 395 թ. բաժանում է Հռոմեական կայսրությունը 2՝ արևելյան և արևմտյան մասերի:

1	2	3

Առարկայական  
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,  
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.04.2019 թ.